ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

h.1127211
01-05-2024թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *ԱՄ ՓԱՐԹՆԵՐՔ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՔԱՄՓՆԻ ՍՊԸ*
Հասցե՝ ԵՐԵՎԱՆ, , ԿԵՆՏՐՈՆ,
ՎԵՐԻՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ Փ., 135, 3
emehrabyan@ampartners.am : 37441050136

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Համաշխարհային Բանկի ֆինանսավորմամբ Հայաստանում իրականացվում է «**Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման» (ՏՏԵԶ) ծրագիրը**: Դա զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավման ամենախոշոր ընթացքի մեջ գտնվող ծրագիրն է (ավարտը՝ 2024թ. դեկտեմբերին), որի շրջանակներում իրականացվում է Հայաստանի 41 զբոսաշրջային վայրերի ենթակառուցվածքների կառուցման կամ բարելավման աշխատանքներ: Ենթա-ծրագրերից 1**-ը իրականացվել է Լոռու մարզում՝ մասնավորապես վերակառուցվել է դեպի Դենդրոպարկ տանող ճանապարհը**: Ծրագիրն իրականացվում է **Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից**:

Մեր ընկերությունը (AM Partners խորհրդատվական ընկերություն, www.ampartners.am) հանդիսանում է ՏՏԵԶ Ծրագրի մոնիտորինգի գործակալությունը: Բացի բուն մոնիտորինգի գործառույթներից՝ մենք ուսումնասիրում ենք նաև, թե ծրագրի տարածքներում քանի աշխատատեղ է ստեղծվել ՏՏԵԶ Ծրագրի իրականացման արդյունքում: Աշխատատեղերի գնահատման համար ընտրվել են հետևյալ տեսակի տնտեսվարող սուբյեկտները (իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր)՝ հյուրանոց, հյուրատուն/B&B, այլ զբոսաշրջային կացարաններ (ճամբարային վայրեր և այլն), տուր օպերատորներ, գիդ-զբոսավարներ, զբոսաշրջության տեղեկատվական գրասենյակներ (DMO, ինֆո-կենտրոն), առողջարաններ, ձեռագործ իրեր պատրաստողներ, զբոսաշրջային տրանսպորտային ծառայություններ մատուցողներ, զբոսաշրջային ժամանցային գործունեություն իրականացնողներ:

Ուսումնասիրությունն առավել համապարփակ իրականացնելու և առավել իրական պատկեր ստանալու նպատակով, խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն վերոնշյալ տեսակների գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մասին՝ ըստ ներքևում ներկայացված ձևաչափի, որոնք գործունեություն են իրականացնում Գյուլագարակ համայնքում:

<u>Տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ տվյալների ձևաչափ:</u>

Տնտեսվարող սուբյեկտների անունները, ներառյալ կազմակերպաիրավական ձևը	Սուբյեկտի գործունեության հասցեն	Կոնտակտային տվյալներ

(օրինակ՝ Xxx ՍՊԸ, կամ Xxx Yyyյան ԱՁ)	(Մարզ, բնակավայր, փողոց, շինության No)	(առկայության դեպքում)

Հարգանքով՝

ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի ՍՊԸ

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Դիմող՝

ԷԴԳԱՐ ՄԵՀՐԱԲՅԱՆ